

սրբական պարտք ենք համարում մեր ան-
սահման երախտազիտությունը հայուներու-
թուրը ճնշված ու ստրկացված ժողովուրդ-
ների փրկության փարուսին՝ հանձարեղ
ՍՏԱԼԻՆԻՆ, որին մենք բոլորս պարտական
ենք մեր մայր-հայրենիքի վերածնության
և ծաղկման համար, մենք լի ենք մեծ ե-
րախտազիտության զգացմունքով զեղպի
աղնիվ ու մեծ ոռու ժողովուրդը, որը ե-
ղել է և մնում է մեր ժողովովիքի պաշտպա-
նը և մեծ բարեկամը: Մենք մեր չնորհա-
կալությունն ենք հայտնում Սովետական
Հայաստանի կառավարությանը և ժողովուր-
դին՝ մեզ ցույց տրված հյուրներության
և մեր Հայրենիքը այնպես մոտիկից ու-
սումնասիրելու հնարավորություն տրա-
մադրելու համար»:

Ռումինիայում ազգող հայերի պատղա-
մավորության ներկայացուցիչ դոկտոր Ա.
Տիրացյանն ասաց. «Մենք մեր հայերդ

սիրելի հայրենիքից մեկնում ենք ամենա-
լավագույն տպավորություններով, որով
հետեւ այն բոլորը, ինչ որ տեսանք ու լսե-
ցինք, գերազանցում են մեր բոլոր սպա-
սումները: Այսօր մենք նումինիա ենք
մեկնում խորին համազմունքով, որ այնու
ոչ մի բան ի միակի չի կանգնեցնելու
հայերի հայրենիքի տնտեսական ու կուլ-
տուրական վերելքը, որովհետեւ այդ վե-
րելքը կատարվում է սրբնթաց արագու-
թյամբ և գտնվում է հաստատ ձեռքե-
րում:

Մենք հպարտ ենք մեր ստացած տպա-
վորություններով և հույս ունենք, որ մեզ
հետ միասին նաև արտասահմանյան ամ-
րող հարությունը շատ շուտով կկարողա-
նա հավաքել հայրենիքի հովանու տակ:

(«Սովետ. Հայաստան», 6 հուլիսի,
1945 թ., 134 (7387)):

(ՀՀԳ)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Ս. թ. հուլիսի 3-ին Երևանի օդանավա-
կայանից հասուլ ինքնաթիւուներով գետի
թեհրան և Սովիտ մեկնեցին Ռումինիայի,
Բուլղարիայի, Իրանի, Թյուրքիայի, Հու-
նաստանի, Լիբանանի, Սիրիայի, Պաղես-
տինի, Եգիպտասի և Ամերիկայի պատղա-
մավորներն ու հյուրերը:

Երևանի օդանավակայանից թուշելուց ա-
ռաջ Հայ Եկեղեցական ժողովի պատղա-
մավորները և հյուրերը հեռադիր ուղարկե-
ցին Սովետական Միության Գեներալիստ-
մուս Մեծ ՍՏԱԼԻՆԻՆ, որով չնորհակալու-

թյան և երախտազիտության զգացմունք
են հայունում սիրելի հայրենիքը այցելելու
հնարավորության և ցույց տրված հյուրըն-
կալության համար:

Ծնորհակալության հեռագրեր ուղարկվե-
ցին նաև Հայկական ՍՍՌ Գերազույն Սո-
վետի Նախագահության Նախագահ ընկ.
Մ. Պապյանին և Մայրապուն Պատրիարք
Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեվորգ Զին:

(«Սովետ. Հայաստան», 6 հուլիսի,
1945 թ., № 134 (7387))

